# 415 Ով Տեր Աստված, միշտ եղիր մեզ օգնական,

1. Ով Տեր Աստված, միշտ եղիր մեզ օգնական,
Լվա՛ մեզ միշտ լիովին Քո սուրբ արյամբ,
Լուսավորիր Քո սիրով մեր հոգին,
Որ դառնանք Քեզ, որ դառնանք Քեզ, միշտ սուրբ լինենք:

Ալելուիա՛, Հզոր Աստված,
Ալելուիա՛, օրհնյալ Աստված,
Ալելուիա՛, ալելուիա՛, Տեր Աստված,
Ալելուիա՛, ալելուիա՛, սուրբ Աստված:

2. Ուղարկեցիր սիրելի, միակ Որդուդ,
Սուրբ կյանք ապրեց երկրի վրա Քո կամքով,
Գողգոթայի խաչը ելավ, չարչարվեց Նա
Եվ սրբեց մեզ, և սրբեց մեզ Իր սուրբ արյամբ:

3. Իմ եղբայրնե՛ր և իմ քույրե՛ր, Իրեն նայենք,
Մեր մեղքերով Տեր Հիսուսին չվշտացնենք,
Ապրենք, քայլենք, գործենք, խոսենք միայն սիրով,
Հաղթենք չարին, հաղթենք չարին Տեր Հիսուսով: